

րը, անտարակոյս, սոսկումով պիտի արձանագրէ նման երեւոյթներ...

Վերադառնանք Լուցցատտիին:

II

Վենետիկէն էր եւ կը սիրէր մեր զրոյցներու ատեն յիշել իր մանկութեան օրերը գօնդօլի մէջ Ս. Ղազարի պատերուն տակ: Այն օրերէն արդէն Հայաստանը եւ հայու տխուր ճակատագիրը տպաւորուեցին իր հոգիին մէջ... Ինքը հրէական ծագումն ունէր եւ չէր թաղցնէր այդ, չէր ուրանար շատերու պէս իր ցեղը, ընդհակառակը, կարծես հպարտութեամբ կը շեշտէր այն եւ ստէպ կը յիշատակէր երկու ցեղերու — հայու եւ հրէայի — արտակարգ ընդունակութիւններն ու անոնց պատմական ճակատագիրներու նմանութիւնը:

Հրէական ծագում ունենալով հանդերձ ջերմ իտալացի հայրենասէր էր: Դժուար է գտնել ուրիշ դէմք մը, որ այնքան սէր ու յարգանք վայելէր ամբողջ Իտալիոյ մէջ: Լայն, ճշմարիտ ժողովրդականութեան մէջ անոր հետ մրցել կարող է միայն Ֆիլիպպօ Տուրատի, Իտալիոյ ընկերավարական շարժման պարագլուխը, որ վերջերս ստիպուած եղաւ փախչել իր հայրենիքէն եւ կ'ապրի, որպէս արտարական, Ֆրանսիոյ մէջ:

Լուցցատտիի հռչակը տարածուած էր Իտալիոյ սահմաններէն դուրս: Նա համագործակցական (կօօպէրատիվ) շարժման մեծագոյն հիմնադիրներէն էր ամբողջ աշխարհում եւ միանգամայն ամենախոշոր տնտեսագէտներէն մէկը: Իսկ ֆինանսական գիտութեան մէջ անմրցելի էր, եղակի իր հայրենիքում:

Աշխարհի նշանաւոր հրէաները մասնաւորապէս հպարտ էին իրենց Լուցցատտիով, որ տեսակ մը հրէական պատրիարք էր Հռոմի մէջ նստած, — պատրիարք մը՝ որ ժամանակ առ ժամանակ հրովարտակներ կ'արձակէր Պաղեստինի հրէաներուն:

Եւ այդ պատրիարքը օրն ի բուն հիւրեր կ'ընդունէր իր անշուք բնակարանին մէջ — որ հսկայ զբաղարան մըն է, ուր անկիւն մը յատկացուած է Հայաստանին վերաբերեալ գրքերուն ու վաւերագրերուն — ինքն անձամբ կը դիմաւորէր այցելուներուն ամենամտերմական ձեւերով, հազնուած որպէս պարզ արհեստաւոր, negligé, հին, խունացած վերարկուի

մը մէջ, առանց օձիքի, փողկապի, կօշիկներու, կը խօսէր այլ եւ այլ լեզուներով, զրեթէ միշտ ինքը կը խօսէր, համեմելով իր զրոյցը զուարճալի անէկզօտներով ու սրախօսութիւններով:

Օր մըն ալ Մօրգենթաու — ամերիկացի մեծ հայասէրը, նոյնպէս ծագումով հրէայ — Հռոմ եկաւ (1922-ի ամառը) իր տիկնոջ ու յայտնի ամերիկեան հրապարակագիր Գիրբընսի հետ եւ կամեցաւ այցելել Լուցցատտիին: Խնդրեց ինձի, որ ժամադրութիւն առնեմ ծերունիէն: Բայց միջնորդի իմ այդ պարզ պաշտօնը մեծամեծ դժուարութիւններու հանդիպեցաւ: Հեռախօսով իմ հարցումներուն ծերունին որոշ պատասխան չէր տար եւ յայտնապէս կը դժկամակէր: Իսկ Մօրգենթաու կ'աճապարէր, պիտի մեկնէր: Ան խիստ զարմացած էր, որ Լուցցատտի անմիջապէս դրական պատասխան չտուաւ: Շտապեցի անձամբ «պատրիարքին» քով: Դրան մուտքին՝ մտերիմները ըսին ինձի.

«Այցելուն մեծ երկրի մը դեսպան լինելով՝ (Կ. Պոլսոյ ամերիկեան նախկին դեսպանը), ծերունին ստիպուած պիտի լինի ձգել իր սովորական negligé-ն, վար դնել իր վերարկուն ու հաղաթափերը եւ հազնուել վայելուչ ձեւով... Իսկ ատիկա տաժանելի բան մըն է անոր համար, մինչ պ. Մօրգենթաու եւ ուրիշներ պարզ հետաքրքրութեան համար միայն տեսնալ կ'ուզեն Լուցցատտիին»...

Մտայ ծերունու առանձնասենեակը եւ հարկ եղաւ երկարօրէն ցուցադրել Մօրգենթաուի դէմքն ու դիրքը, հայ ժողովրդին անոր մատուցած ծառայութիւնները, վերջապէս, անոր ջերմ փափաքը՝ տեսնելու Լուցցատտիին... Յաջորդ օրը տեղի ունեցաւ այդ տեսակցութիւնը, որ տեւեց մէկ ժամու մը շաբաթ ամենահաճելի եւ մտերմական անդիլերէն զրոյցի մը մէջ: Պատրիարքը հազնուած էր փառահեղօրէն — այնպէս, ինչպէս կը հազնուէր հանդիսաւոր պարագաներում, երբ կ'երթար արքայական բանքներուն, կամ Ծերակոյտի բացառիկ, հանդիսաւոր նիստերուն:

Եւ հող, երկու համբաւաւոր «հրէաներու» այդ զուարճալի զրոյցի ընթացքին, Իտալիոյ նախկին վարչապետը — ցուցնելու համար, որ հայը հնարագիտութեամբ կը զերազանցէ ան-